ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«11» Նոյեմբերի 2019թ. N 604-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 600-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների կանոններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» N 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգում (այսուհետ՝ նաև կարգ) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը՝

1) կարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սույն կարգով կարգավորվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ նաև օրենք) նախատեսված գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց (այսուհետ՝ նաև Անձ) գործունեության հետ կապված հարաբերությունները: Սույն կարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Լիազորված մարմնի ղեկավարի անհատական իրավական ակտերով:».

2) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.3 կետով՝

«4.3. Անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր ժամանակավոր բացակայության հիմքի առաջացման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հանձնման-ընդունման ակտով մյուս Անձին է փոխանցում տվյալ

օրվա դրությամբ չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը, ներառյալ ընդունված, սակայն տեղեկագրում չհրապարակված որոշումները: Ընդունված, սակայն չհրապարակված որոշումները տեղեկագրում հրապարակում է գնումների հետ կապված բողոքներ քննող այն անձը, որին հանձնվել է որոշումը՝ այն ստանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ընդ որում տվյալ օրվա դրությամբ չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերի մասով գործերի քննությունը սկսվում է սկզբից: Անձի կողմից սույն կետով նախատեսված կարգով չավարտված բողոքարկման և/կամ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը, ներառյալ ընդունված, սակայն տեղեկագրում չհրապարակված որոշումները մյուս անձին փոխանցելու պահից մինչև Անձի ժամանակավոր բացակայության հիմքի վերացումը Լիազոր մարմինը տվյալ Անձին բողոքներ և օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա նախաձեռնված ընթացակարգերին վերաբերող փաստաթղթեր չի տրամադրում:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2019 թվականի հոկտեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ